

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 17.06.2021թ. թիվ 2112878525 որոշումն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու մասին

<<01 >> 07 2021թ. 7-13 10406

ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյանս, վերանայելով Ռոբերտ Դալլաքյանի թիվ ՄԴ/52188-21 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

Երևան քաղաքի Նալբանդյան փողոցի 116 շենքի 29 բնակարանի բնակիչ Ռոբերտ Դալլաքյանը դիմումով խնդրել է վերանայել վարչական տույժ նշանակելու մասին 17.06.2021թ. թիվ 2112878525 որոշումը՝ նշելով, որ համաձայն չէ իրավախախտման հետ:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ դիմումատուի փաստարկը չի կարող վարչական ակտը վերանայելու հիմք հանդիսանալ հետևյալ պատճառաբանությամբ.

<<Տեսանկարահանող և լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած **տեսանյութն է կամ լուսանկարը**, որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված փվյալները:

<<Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին>> << օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ **երթևեկելի մաս է** համարվում ճանապարհի փարր՝ նախատեսված ոչ ռելսագնաց տրանսպորտային միջոցների երթևեկության համար.

<< կառավարության <<Ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների ու պայմանների ցանկը սահմանելու մասին>> թիվ 955-Ն որոշման 84-րդ կետի 6-րդ ենթակետի համաձայն՝ **կանգառն արգելվում է** խաչմերուկներում, **երթևեկելի մասերի հատման վրա** և հատվող երթևեկելի մասի եզրից 5 մ պակաս վայրում:

Վիճարկվող որոշմամբ ամրագրված իրավախախտման PIN անհատական ծածկագրի փակ զեպտեղված տեսանյութի դրվագային ուսումնասիրությունն ակնհայտ է դարձնում այն փաստը, որ դիմումատուին պատկանող տրանսպորտային միջոցը 29.05.2021թ. ժամը 18⁵⁸-ին կանգառ է կատարել Երևան քաղաքի Թումանյան-Նալբանդյան փողոցների խաչմերուկի հատվածում՝ երթևեկելի մասերի հատման վրա՝ 18:57:42 վայրկյանից մինչև 18:59:14 վայրկյանը, որի տևողությունն է 92 վայրկյան, իսկ վարչական իրավախախտումների վերաբերյալ << օրենսգրքի 124-րդ հոդվածի 21-րդ և 25-րդ մասերով նախատեսված արարքը նվազ նշանակություն ունեցող գնահատելու համար, ըստ նույն հոդվածի 39-րդ մասի տառացի մեկնաբանության, ոչ թե իրավախախտման փաստն արտացոլող տեսանյութի տևողությունը, այլ վարչական իրավախախտման տևողությունը չպետք է գերազանցի 1 րոպեն, հետևաբար առկա չէ

իրավական որևէ հիմք դիմումատուի արարքը նվազ նշանակություն ունեցող գնահատելու համար:

Այսպիսով, դիմումատուի գործողություններում առկա է մեղքը, իսկ մեղքը դա անձի հոգեկան վերաբերմունքն է իր կատարած արարքին և դրան հաջորդող հետևանքին, որը կարող է դրսևորվել ինչպես **դիպավորությամբ**, այնպես էլ **անզգուշությամբ**, ինչի պարագայում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի իմաստով որևէ նշանակություն չունի, թե կոնկրետ արարքը վարորդը կատարում է այն պատճառով, որ հստակ գիտակցում է, որ դա խախտում է և դիպավորությամբ կատարում, թե այն պատճառով, որ վարորդը գիտակցում է, որ այդ արարքը արգելված է օրենքով, սակայն ինքնավստահորեն հույս է ունեցել, որ դրա հետևանքները վրա չեն հասնի և թե այն պատճառով, որ վարորդը չի գիտակցել իր գործողության հակահրավակական բնույթը, սակայն կարող էր և պարտավոր էր գիտակցել այն (ՎԻՎՕ՝ հոդված 11)՝ զանցակազմի սուբյեկտիվ կողմ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 9-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում պետական կամ հասարակական կարգի, սոցիալիստական սեփականության, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ ուղղվող հակահրավակական, մեղավոր (**դիպավորյալ կամ անզգուշ**) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն, հետևաբար ակնհայտ է, որ անկախ անձի կողմից մեղքի ձևի դրսևորումից, նշված օրենսգրքի համապատասխան հոդվածի դիսպոզիցիայով նկարագրված արարք կատարած անձը պետք է ենթարկվի վարչական պատասխանատվության Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի համապատասխան հոդվածի սանկցիայի շրջանակներում, ուստի դիմումատուին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին վերը նշված որոշումն իրավաչափ է և օրինական:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Ճանապարհային ոստիկանության վարչական փույժ նշանակելու մասին 17.06.2021թ. թիվ 2112878525 որոշումը թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
3. Սույն որոշման օրինակն ուղարկել Ռոբերտ Դալլաքյանին:

